1916-էն 1941 Տիար Մերկեր Ահարոնեանի դպրապետութեան տակ  
երգած, բայց ցայժմ ամուսնացած ու թոռնիկներու այ տիրացած, եւ  
գեռի Լուվել բնակող Դպրաց Դասի անգամ — անգամուհիններուն մէջ կա-  
րելի է յիշել հետեւեալները:—

Տիարք՝ Ելիա Ճոյնաւորեան, Կարապետ Պօղոսեան, Յարութիւն  
Տէր Միքայէլեան, Սաչիկ Մարդպանեան, Կարապետ Պէրպատեան,  
Յակոբ Պէրպատեան, Մերկերիոս Կարապետեան, Սարգիս Գաղանճեան,  
Կարապետ Մակարեան, Մուշեղ Մուշեղեան: Տիկնայք՝ (այսօրուան մա-



կանոններով) Հոփսիմէ Մարգարանեան, Պէսի Կիւրեղեան, Ռոզ Մարգարոս: Այս թուականիս քաղաքէս հեռացած եւ կամ ի տէր հանգած Դպրաց Դասի անդամներուն անունները յիշելը զանց կ'առնենք, տեղի սղութեան Պատճառաւ:

1941-էն 1955 զանազան Դպրապետերու ձեռքին տակ երգած բայց այսօր ամուսնացած լինելով եւ կամ այլ պատճառներով երգելէ զազրած անդամ անդամուհիներուն մէջ կարելի է յիշել հետեւեալները. — Տիարք՝ Նշան Քայաճանեան, Աղատ Ճպնաւորեան, Մանուկ Շապուհեան, Ղազարոս Շապուհեան, Պոլոս Գրիգորեան, Սահակ Մարգրիսեան, Մինաս Պողոսեան, Ժիրայր Պողոսեան, Ժիրայր Ահարոնեան, Համբարձում Մանոյեան, Մկրտիչ Մանոյեան, Մկրտիչ Գաղանճեան, Սարգիս Գաղանճեան (Կրտսեր), Գրիգոր Ասլանեան, Յովհաննէս Ասլանեան, Վահէ Բարիկեան, Սահակ Մանոյեան, Պարսամ Պարսամեան, Սէմ Կուտուղեան: Տիկնայք՝ Եվա Պողոսեան, Աղատուհի Քայաճանեան, Սիրուն Կուտուղեան, Մարգրիտ Մանոյեան, Անահիտ Տէքոյեան, Սիրուն Բարիկեան, Եղիսաբէթ էյթքըն, Մարիամ Մայմոնի (Պարսամեան), Անահիտ Մալումեան, Զապէլ Կտանեան, Անժէլ Վարդէլ (Բարիկեան), Վարդուհի Գլըճեան: Օրիորդներ՝ Եղիսաբէթ Գրիգորեան, Ճուհար Շապուհեան, Մանուշակ Կարապետեան, Փառանձեմ Կարապետեան, Շնորհիկ Պէրպատեան, Թադուհի Պոնաճեան, Մարիամ Քաջանեան, Ալիս Քաջանեան, Անահիտ Օհանեան, Վարդուհի Մօրուքեան, Պէյլըլի Բիլոյեան, Պէթի Քայաճանեան:

Գառնիկ Գաղանճեան նախկին Լոյկեցի մը շատ մը տարիներ երգած, երբեմն Դպրաց Դասը ղեկավարած եւ վերջերս ալ յաճախ վերադարձած եւ Դպրաց Դասը ճոխացուցած է:

Հոս կ'արժէ յիշել Անահիտ եւ Սիրանուշ Տէր Մանուկլեան քոյրերու Եկեղեցւոյս Դպրաց Դասուն մէջ բերած օգնութիւնը: Անոնք երկար տարիներ Եկեղեցւոյս մէջ որպէս դպրուհիներ երգելէ վերջ, Լոյկէն հեռանալէն վերջ իսկ ժամանակ մը մինչեւ Լոյկել երթուաբարձ կատարելով երգչախումբ մը յաստացուցին եւ աշխարհիկ ու կրօնական երգեր սորվեցնելով անոնց, թէ Լոյկելի եւ թէ Պոսթոնի մէջ երգահանդէսներ սարքեցին 1946-էն 1948: Նոր սերունդը մինչեւ այսօր կ'երգէ անոնց կողմէ ուսուցուած երգերը եւ կը յիշէ այդ օրերու երգչախումբին զեղեցիկութիւնը:

40 տարիներու ընթացքին Եկեղեցւոյս մէջ երգեհոնահարութիւն ըրած են, 1917-1924 Կիւլիստան Գրիգորեան, 1925-1933 Սիրանուշ Տէր



Եկեղեցւոյս Դպրաց Դասի Աղջիկները 1936-ին

**Մանուէլեան եւ Եղիսարէթ Պոյաճեան**, 1934-1947 Ազատուհի Գաղանձ-  
**եան** (մէջ ընդ մէջ Սանձի Մարզարեան եւ Անահիտ Ծոցեկեան) 1948-  
1955 Սիրուն Պէրպատեան եւ Վարդուհի Ամպոյսեան :

Վերջին քանի մը տարիներուն եկեղեցւոյ Դպրաց Դասը իր հին  
փաստքն ու հարստութիւնը կորսնցուցած է : Ասոր պատճառ կարելի է նը-  
կատել կարող եւ սոմէն Կիրակի եկեղեցի գալ փափաքող Դպրատեալի մը  
չզստովիւնը, եւ Դպրաց Դասի անդամ - անդամուհիներուն ամուսնու-  
նալով հետանալը : Այսօր Դպրատեալ գոյութիւն չունի եւ Դպրաց Դասի  
մնացեալ անդամները կազման ու կ'երթան իրենք իրենց պիտուն երգե-  
լով : Բարեբախտաբար բոլորն ալ զիտեն երգերը եւ դպրատեալի մը չզս-  
տովիւնը շատ պզտիկ է :

Ծխական Խորհուրդը այս անել կոչութիւնէն ազատելու մտօք կրրա-  
տեբաց դպրաց խումբի մը սկիզբը դրած է : Մօտաւորապէս 12 փոքրիկ-  
ներ արդէն քանի մը ամիսներ է Պատարաղի երգերը կը սորվին : Իրենց  
ուսուցիչն է Օր - Արաքս Ասատուրեան որ Պոսթմոնի Երաժշտանոցը աւար-  
տած է եւ նուագելու ուսուցչութեամբ կը պարտաղի : Եթէ Ծխական Խոր-  
հուրդի այս ծրագիրը յաջողի սպարապի համար մեր մտահոգութիւն-  
ները կը փարատին :

Այսօր երկէս դպրաց դասի անդամ անդամուհիները հետեւեալներն  
**են**. Տիարք Զակար Կիրակեան, Արամ ձգնուորեան, Արմէն Գլըճեան,  
Կարապետ Գոթուքեան, Տիկնայք Եղիսարէթ Պօղոսեան, Արիս Տօսէթ :  
**Օրիորդներ** Մարիամ Ասլանեան, Վարդուհի Ամպոյսեան, Սիրվարդ Պո-  
ղոսեան, Սիրուն Պարպատեան, Մարիամ Պոյեան, Անահիտ Աւրոյեան,  
**Փոյլուն** Կիրակոսեան, Մարգրիտ Գրեղեան, Անահիտ Գլըճեան, Եղի-  
սարէթ Սուճեան, Արաւիկա Թորգոմեան, Աւարս Ասատուրեան :

Կրտսեբաց Դպրաց խումբին մէջ այժմ երգելու վարժութիւն կ'ընեն  
հետեւեալները. Արմէն ձգնուորեան, Յովհաննէս Տաղտիկեան, Եղ-  
աւարդ Մինասեան, Ռազրրդ Նարպանտեան, Ալնարա Ամպոյսեան, Լու-  
սիկ Լուսիկեան, Գէրրդ Նարպանտեան, Էտրերն Նարպանտեան, Եւրր  
Մուշկեան, Հէրիկ Գուշկեան, Անահիտ Քարոյեան, Մարիամ Տօ-  
նապետեան : Ինչպէս ըսինք այս խումբին ուսուցչուհին է Աւարս Ասա-  
տուրեան, իսկ երգեհոնահարութիւնը կ'ընէ Սիրուն Պէրպատեան :

Ծխական Խորհուրդները գրեթէ միշտ իրենց ինամքին եւ մտահո-  
գութեան առարկայ ըրած են Դպրաց խումբը : 1941-ին մեծ հանդիսիւ  
Դպրաց խումբի 25ամեակը կը ածնուի : 1951-ին եւ 1952-ին իրենց ի պա-  
տիւ ճաշկերոյթներ կը արուին եւ խաչանման զարդասեղներ կը նուիրեն  
Լուրաքանչիւրին :

Սկիզբները Դպրաց խումբը սոմէն Կիրակի պնակ ունէր եկեղեցւոյ  
մէջ, 1934-ին կ'սկսին Ծխական Խորհուրդի սրտումբ միայն 5 տաղա-  
ւորներուն պնակ պարայնելի : Վերջին քանի մը տարիներուն միայն Զա-  
տիկին եւ Ծնունդին պնակ կը պարայնեն : Իրենց բոլոր պէտքերն ալ  
կը հոգացուին Ծխական Խորհուրդի կողմէ : 1948-ին Տիկնայց Միւթ-  
եան ծախսերով 40 նոր շապիկներ կարուցան իրենց համար :

Լափելի Դպրաց խումբը 1948-էն ի վեր անդամ է Ամերիկահայաց  
թեմի դպրաց խումբերու կազմակերպութեան : Միշտ սուսած է իր սուր-  
բ եւ պատգամաւորները գրեած է տարեկան համապատմարներու : Մա-  
րիամ Պարսամեան եղած է սոսմին պատգամաւորը Ռոզայի Մարգարեան-  
եան, Եղիսարէթ Կլարեկեան, Արիս Թորգոմեան, Անահիտ Գլըճեան,  
Արաւիկա Թորգոմեան եւ Սիրուն Պէրպատեան պատգամաւոր եղած են  
յաջորդական տարիներուն : Լափելի Դպրաց խումբի պատգամաւորները  
մեծ դեր ունեցած են, այժմ մեծ հոշակ հանած ԴՊՐԱՅ ԽՈՒՄԵՐՈՒ  
ՏԱՐԵԿԱՆ ՍԷՄԵՆԱՐԻՆ, սկիզբուորութեան մէջ :

### ԺԱՄԱՈՅ

Եկեղեցւոյս արձանագրութիւնները կարգացողը այն պատուրու-  
թիւնը կ'ունենայ որ, եկեղեցւոյս շինութիւնէն սաղին եկեղեցւոյ մտք-  
ութիւնը կատարող ժամկոչ մը գտնելը եւ պահելը, հովիւ մը գտնելու  
եւ պահելու չափ դժուարին եղած է :

40 տարիներու ընթացքին աւելի քան 15 ժամկոչներ եկած եւ դա-  
ցած են : Ետտ յաճախ ժամկոչի չզստովեան պատճառաւ Ծխական Խոր-  
հուրդի անդամները այդ պարտականութիւնն եւս իրենց սուսուն վրայ  
սուսած են :

Ասոմին 30 տարիներուն ժամկոչին գործը շատ աւելի դժուար եղած  
է թէ անոր համար որ եկեղեցւոյ սրահը աւելի կը գործածուէր, եւ թէ ալ  
մանաւանդ անոր համար որ եկեղեցւոյ տաքութիւնը անսխալ կը մատա-  
կարարուէր : Այսօրեբու գործը շատ աւելի զիւրին է : շարաթիւն անդամ  
մը մարբութիւն, խոտերը կտրել, եւ ձիւները մաքրել :

Որպէս երկար առեկուայ ժամկոչ կարժէ յիշել անունը Տիար Սար-  
գիս Պարսամեանին որ պաշտօնէ կը քաշուի միայն աչքերուն կուրծալուն  
պատճառաւ : Պէտք է յիշել անունները նաեւ Տիար Խաչատուր Պէրպատ-  
եանի եւ Տիար Յովհաննէս Խաչատուրեանի, որոնք ձրիօրէն գործած են,  
եւ Տիար Մուշկե Սարգիսեանի, որ մինչեւ մահուն օրը ժամկոչութիւն  
ըրած է : Մեր այժմու ժամկոչը փոյնտայի ձրեանի մին է, մարբասէր  
եւ գործունեայ, որ պահպանելի կերպով կը կատարէ իր գործը :

## ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑ

Կիրակնօրեայ Դպրոցի սկզբնաւորութիւնը կը դրուի 1927-ին: Այս շրջանի նախաձեռնող եւ ուսուցչութիւն ընողներ կ'ըլլան Տիկնայք Մարիամ Պոյաճեան, Սիրանուշ Պէրպատեան եւ Նուրիճա Կարապետեան: Կը պատմուի թէ մեծ թիւով աշակերտներ կային, եւ մինչեւ 1932 գրպոցը շարունակուած է ամէն տարի:

Արձանադրութեանց մէջ կը կարգանք ուր 1935-էն 1936 եւս Կիրակնօրեայ Դպրոցը դոյուլթիւն ունեցած է այս անդամ մատուորապէս 40 աշակերտներով: Այս շրջանի ուսուցիչները եղած են Ալիս Պարտաճեան, Էօթէն Գաղանճեան եւ Եղիսարէթ Կարապետեան:

Բաւական ատեն զոց մնալէ վերջ Կիրակնօրեայ դպրոցը կը վերաբացուի 1947-ին 25 աշակերտներով: Կիրակնօրեայ դպրոցի վերաբացումը կ'ըլլար Տիար Ժիրայր Ահարոնեանի ջանքերով: 1947-ին 48-ին եւ 49-ին Կիրակնօրեայ Դպրոցը ՀԵՆԿԱ-ի խնամատարութեան տակն է: Ուսուցչութիւն բրած են, Տիկին Անահիտ Տէրոյեան եւ Մարգրիտ Կայլըր եւ օրիորդներ Ենորճիկ Պէրպատեան, Թադուհի Մանուկեան, Եղիսարէթ Գրիգորեան, եւ Մարիամ Մանուկեան:

Պէտք է շեշտել սակայն որ 1950-էն սողին է որ Կիրակնօրեայ Դպրոցը աւելի կազմակերպուած, եւ աւելի ամուր հիմերու վրայ դըրուած է: Դրամական եւ նիւթական հոգատարութիւնը բոլորովին յանձնուած է այս նպատակին համար հիմնուած Օթանդակ Միութեան: Ունինք աւելի քան 50 աշակերտներ: 5 դիւտուոր դասարանային բաժանմունքներ դոյուլթիւն ունին: Ամէն աշակերտ լրտաքանչիւր դասարանի մէջ կը մնայ երկու տարի: Որով եթէ փոքրիկ մը 4 տարեկանին Դպրոց կարճանադրուի 14 տարեկանին կ'աւարտէ զայն կողմ ու պատրաստ Դպրոց խումբին մէջ մտնելու համար: 1950-էն 55 արդէն ունեցած ենք 3 շրջանաւարտներ որոնցմէ երկուքը այժմ դպրոց խումբի անդամ են:

Գաղափար մը տուած ըլլալու համար դասարանային բաժանմունքներու եւ ուսուցչուած նիւթերու մասին ստարեւ կըստանք վերջին տարիներուն զործածուող դասացուցակը:

Ա. ՄԱՆԿԱՆՅ ԴԱՍԱՐԱՆՆԵՐ — Աշակերտները դանաղան խաղերով պարտալէլէ գաս կը սորվին նուեւ 4-5 տարեկան Մանուկներու համար պատրաստուած Ս. Գրական Պատմութիւններ:

Բ. ՍԿՄԵԱԿ ԴԱՍԱՐԱՆՆԵՐ — Այս դասարաններուն մէջ 5-6 տարեկաններ կը սորվին Հայր Մեր, Եկեղեցական տաարկաններու եւ զղեստ-

ներու Հայերէն անունները: Եւ Ս. Գրական նշանաւոր դէմքեր եւ Իէպղեր:

Գ. ԿՐՏՍԵՐԱՅ ԴԱՍԱՐԱՆՆԵՐ — 8-9 տարեկան աշակերտներ կը սորվին Տասնաբանեան եւ Հին Կտակարանը զործածելու կերպը:

Դ. ՄԻՋԻՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐ — 10-11 Տարեկան աշակերտներ կը սորվին Նոր Կտակարանը զործածելու կերպը եւ Հայկական ծէսերու եւ Պորհուրդներու իմաստը:


Ե. ԵՐԷՑ ԴԱՍԱՐԱՆՆԵՐ — 12-13 տարեկան աշակերտներ կը սորվին Հայ Եկեղեցւոյ Պատմութիւն եւ Հաւատամք:

Կիրակնօրեայ Դպրոցը իր զբնական պիտոյքներուն ծախսերը կը հոգայ Կիրակիէ Կիրակի բերուած լուծմաներով: Կիրակնօրեայ Դպրոցի տարին կ'սկսի Հոկտեմբերի առաջին Կիրակին եւ կը վերջանայ Յունիսի կէսերը: Կիրակնօրեայ Դպրոցը ամէն տարի կուտայ զանազան ձեռնարկներ եւ հաւաքոյթներ: Այսպէս Նոյեմբերին Ենորճիկապալուքեան Օրը ուտեստեղէն զնելով քաղաքիս որբերուն կը բաժնէ: Ս. Վարդանի Տօնին ի մի դարով եւ դպրոցներէ հեռու մնալով Եկեղեցւոյ սրահը հաւաքոյթ կ'ուսնենայ որպէս Այդալին Տօն: Ամէն Զատիկի ժողովրդեան կը հրամայնէ հանդէս մը: Եւ Յունիսի սկիզբները Մանկանց Օրը ամապերջի հանդէս կը սարքէ:

1950-էն 1855 Ուսուցչութիւն ընողներու կազմը հետեւեալն է:

1950	1951
Զապէլ Գլըճեան, Վարիչ	Զապէլ Գլըճեան, Վարչ
Անահիտ Պարսոբեան	Անահիտ Պարսոբեան
Անահիտ Պարսոբեան	Արփի Գլըճեան
Արփի Գլըճեան	Ճուհար Կիրակոսեան
Ճուհար Կիրակոսեան	Պէվրըլի Պարսոբեան
	Անահիտ Օհանեան
1952	1953
Երէցիկին Զապէլ Կոստեան, Վարիչ	Արփի Գլըճեան, Վարիչ
Անահիտ Պարսոբեան	Անահիտ Պարսոբեան
Արփի Գլըճեան	Պէվրըլի Պարսոբեան
Պէվրըլի Պարսոբեան	Պէաթրիս Գլըճեան
Պէաթրիս Գլըճեան	Այլանի Մանուկեան
Անահիտ Օհանեան	Անահիտ Օհանեան
Աղաւնի Մանուկեան	Պէվրըլի Բիլոյեան
	Տիկ. Անահիտ Տէրոյեան

Ձայլին. — Արմեն Ճգնաւորեան, Ռազմապետ Նալ պանդեղեան, Լիբերա Աստուրեան, Շերշի Մուշեղեան, Երեցիկին Չապիկ Կտանեան, Գեղարք Նալ պանդեղեան, Տային Բարսեղեան, Սեփարա Ամուրեան, Հեղինե Մուշեղեան:



1954  
Պէաթրիս Գլըճեան, Վարիչ  
Անահիտ Պարսորեան  
Պէվըրլի Պարսորեան  
Աղաւնի Մանուկեան  
Երէցիկին Չապիկ Կտանեան  
Պէվըրլի Բիլոյեան  
Արփի Գլըճեան

1955  
Երէցիկին Չապիկ Կտանեան, Վարիչ  
Վարդուհի Մօրուքեան  
Անահիտ Պարսորեան  
Պէվըրլի Պարսորեան  
Պէաթրիս Գլըճեան  
Աղաւնի Մանուկեան  
Պէվըրլի Բիլոյեան  
Սթէլլա Մարթաքոս  
Շնորհիկ Պէրպատեան  
Տիկնայք Եվա Պողոսեան, Անահիտ  
Տէրոյեան եւ Պէթի Տաղտիկեան,  
Հակիչներ

1955-ին Կիրակնօրեայ Դպրոցը արձանագրուած եւ կանոնաւոր կերպով Դպրոց եկող աշակերտներու անունները տասնել զրքոյկիս անդլերէն բաժնին մէջ:

Կարժէ հոս աւելցնել նաեւ որ Կիրակնօրեայ Դպրոցի տեսչութիւնն ու ուսուցչութիւնը ամէն ջանք կը թափեն որ աշակերտները ամէն Կիրակի առանց բացակայի Դպրոց զան եւ իրենց ուսուցչուածներն ուշի ուշով ունկնդրեն եւ միտ պահեն: Այս նպատակաւ մասնաւոր արձանագրութիւններ կը պահուին եւ ամէն տարեպէրջի յառաջացեալ եւ բացակայ չունեցող աշակերտներու մրցանակներ եւ զարգասեղներ կը բաշխուին: 1955-1956 տարեշրջանի համար բացակայ չունեցողներու մարզին մէջ մրցանակ շահողներն եղած են.

Սթէլլա Մարթաքոս որ 6 տարի շարունակ բացակայ չէ ունեցած  
Տիգրան Աղաշեան որ 5 տարի շարունակ բացակայ չէ ունեցած  
Տէնիս Գալանճեան որ 4 տարի շարունակ բացակայ չէ ունեցած  
Սէնորա Ամուրեան որ 4 տարի շարունակ բացակայ չէ ունեցած  
Մէյրի Կէյլ Քայաճանեան, Մկրտիչ Ճգնաւորեան եւ Մարգար Ճըլլանաւորեան որոնք 2 տարի շարունակ բացակայ չեն ունեցած:



## ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆ


Գրքոյկիս այս հատուածին մէջ ամէն բանէ առաջ պէտք է շեշտենք սա իրողութիւնը որ այսօրուան մաղերնին ճերմակցած, ձեռքերնին դողդրղացող եւ կամ արդէն իսկ միւս աշխարհ փոխադրուած Լոյկելի Հայ ազգայինները, 1916-ին երբ Սրբոց Վարդանանց Հայաստանեայց Եկեղեցին կառուցին ազգասէր եւ Եկեղեցասէր Երիտասարդ տղաներ եւ աղջիկներ էին: Եկեղեցոյ պատերը բարձրացան երիտասարդներու բաղկին ուժով եւ պաշտամունքները, աղօթքները եւ հաւաքոյթները կատարուեցան երիտասարդական զոհողութեանց, նուիրումի եւ խանդավառութեանց մէջ: Եկեղեցին շինեցին եւ պահեցին այս երիտասարդները մէկ սիրտ եւ մէկ մարմին:

1920-1925 այս ամուրի երիտասարդներուն մեծամասնութիւնը ամուսնացաւ եւ Եկեղեցոյ առաջին սերունդը յառաջ բերաւ դաւակներ ծնանելով: 1936-էն — 1946 այս առաջին սերունդի անդամները արդէն իսկ հասակ նետած եւ իրենց ծնողներուն տեղը գրաւած են որպէս տաքարիւն եւ նուիրեալ երիտասարդներ: Արձանագրութեանց մէջ կը կարդանք որ արդէն իսկ քովի կուզան, ժողովներ կ'ունենան, եւ Մուխրենկերային կեանքը կը լեցնեն երիտասարդական աւելնով:

Այսօր 1956 է: Ամերիկա ծնած առաջին սերունդի մեծամասնութիւնը արդէն իսկ ամուսնացած է եւ դաւակներու տիրացած է: Ամերիկա ծնած երկրորդ սերունդի անդամներուն ամենէն երէցը սակայն հազիւ հազ 10 տարեկան է: Երկրորդ սերունդը կարելի չէ երիտասարդութիւն անուանել տակաւին: Անոնք տակաւին մանուկներ են եւ ուրախ են որ շատ քիչ բացառութեամբ զրեթէ բոլորն ալ կը սողոյեն մեր Կիրակնորեայ Դպրոցը:

Երիտասարդութեան պատիւն ու պարտականութիւնները ուրեմն դեռ կը մնան Ամերիկա ծնած առաջին սերունդին վրայ: Արդեօք անոնք իրենց վրայ զրուած այս պարտականութիւնները լի ու լի կը կատարեն: Արդեօք իրենց վրայ զրուած յոյսերն ու ակնկալութիւնները կը պտղաբերուին: Ասոնք հարցումներ են որ կը լսուին տարէց բերաններէ:

Գրքոյկիս սկիզբները տեղ մը զրեցինք որ այսօր Լոյկելի Մուխրենկեր եւ Լոյկելի եւ իր անմիջական շրջանակին մէջ բնակող Լուսաւորչական եւ քիչ թէ շատ Եկեղեցիով հետաքրքրուող Հայերուն ընդհա-



Հ. Ե. Ե. Կ. Ա. — 1949

նուր թիւն է 500 : Այս անհատներուն վրայ ակնարկ մը նետելով տեսանք որ ասոնց 185-ը երկիր ծնած Հայեր են, 195-ը Ամերիկա ծնած եւ 18 տարեկանէն վեր Հայեր են : Իսկ մնացեալ 120-ը կամ դեռ դպրոց գացող պարմաններ են եւ կամ ալ տունի փոքրիկներ եւ մանուկներ :

## 2. Ե. Ե. 4. Ա.

Ամերիկահայոց թեմի Հայաստանեայց Եկեղեցիներու Երիտասարդաց Կազմակերպութեան Լուսինի ճիւղը հիմնուեցաւ 1947-ին, ձեռամբ Տէր Տիրան Սրբազան Արքեպիսկոպոս Ներսոյեանի որ այդ շրջանին Ամերիկահայոց Առաջնորդն էր : Լուսինի մասնաճիւղին հիմնարկութեան վկայականին վրայ ստորագրող անձերն են, Նշան Քայսաճանեան, Մանուշակ Կարապետեան, Եղիսարէթ Պարպատեան, Եղիսարէթ Կիւրեղեան, Շնորհիկ Պէրպատեան, Ժիրայր Ահարոնեան, Մարիամ Գրիգորեան, Մարիամ Պարսամեան, Փառանձեմ Կարապետեան :

9 տարիներու ընթացքին սոյն Կազմակերպութեան վարչութեանց գլխանը եղած է ըստ հետեւեալին :

1947 — 32 Անդամներ  
Ժիրայր Ահարոնեան  
Մանուշակ Կարապետեան  
Ալիս Թորգոմեան  
1948 — 30 Անդամներ  
Մարիամ Պարսամեան  
Շնորհիկ Պէրպատեան  
Մարիամ Գրիգորեան  
1949 — 25 Անդամներ  
Սաթենիկ Օնանեան  
Էլիզապէթ Կիւրեղեան  
Անէթ Թորգոմեան  
1950 — 24 Անդամներ  
Եղիսարէթ Պէրպատեան  
Մարիամ Առաքելեան  
Այրին Կիրակոսեան  
1951 — 30 Անդամներ  
Վարդուհի Մարգարեանեան

Սիրվարդ Պողոսեան  
Այրին Կիրակոսեան  
1953 — 22 Անդամներ  
Ժիրայր Ահարոնեան  
Մարիամ Ասլանեան  
Ալիս Թորգոմեան  
1953 — 22 Անդամներ  
Ժիրայր Ահարոնեան  
Մարիամ Ասլանեան  
Ալիս Թորգոմեան  
1954 — 25 Անդամներ  
Յովհաննէս Մօրուքեան  
Մանուշակ Կարապետեան  
Շնորհիկ Պէրպատեան  
1955 — 27 Անդամներ  
Անդրանիկ Տէր Կարապետեան  
Մանուշակ Կարապետեան  
Փառանձեմ Կարապետեան

Ըստ 1955-ի ՀԵԿԱ-ի տրատու անդամոց ցանկը տեսնել անդլի-երէնի բաժնին մէջ :

ՀԵԿԱ-ի Լուսինի մասնաճիւղը սովորութիւն ունի ամիսը մէկ անդամ անդամական ժողով դուրսբերել : Կը սարքէ տարեկան երկու ձեռնարկներ : Մայիսին հանդէս խնձոյք մը եւ աշնան՝ պարահանդէս մը :

Որպէս դրամական օգնութիւն սովորութիւն ըրած է Մայիսին սարքուած ձեռնարկին մէջ մոմավառութենէ զոյացած դրամը ամբողջութեամբ եկեղեցւոյս նուիրել :

Այսպէսով ցայժմ եկեղեցւոյ սրահին համար դնած է բարձրախօսի կազմուածք մը, եւ դաշնակ մը : Եկեղեցւոյս խորանին համար դնած է զոյգ մը եօթնաշահեան աշտանակներ եւ երկու կտոր արաւելեան դորդ :

1947-1950 Կիրակնօրեայ դպրոցի հոլատարութիւնը կատարեցին : Յաճախ Եկեղեցւոյ մաքրութիւնը կը կատարեն մեծ տօներու առիթով : Իրենցմէ սմանք Մխակաճ Խորհուրդի անդամ եղած են : Եւ որպէս Միութիւն մաս եւ բաժին կ'առնեն Եկեղեցւոյս բոլոր ձեռնարկներուն կամ արշաւներուն մէջ : Եւ միշտ պատրաստ են օգնելու եւ օժանդակելու : Իրենց անդամուհիներէն 8 հատը կ'երգեն Դպրաց Դասի մէջ :

ՀԵԿԱ-ի ղրխաւոր նպատակը եւ առաջադրութիւնն է Ամերիկայի մէջ ըլլալ հաւատարիմ քաղաքացիներ եւ նոյնքան հաւատարիմ անդամներ՝ Հայաստանեայց Եկեղեցւոյ : Սորվիլ եւ վեր պահել Հայ Եկեղեցւոյ աւանդութիւններն ու կանոնները :

ՀԵԿԱ-ն սքանչելի միութիւն մըն է եթէ բոլոր երիտասարդներն ալ միանան անոր եւ ուժ տան անոր նպատակներուն իրազօրծման, հայ հայրեր եւ մայրեր կրնան այլեւս վստահ ըլլալ որ եկեղեցւոյ ղեկավարութիւնը վստահելի ձեռքերու մէջ է :

ՀԵԿԱ-ի անդամներուն ընդհանուր թիւն է 1000 ամբողջ Ամերիկայի մէջ : Տարեկան Համագումարներուն Լուսին եւս ղրկած է իր պատգամաւորները եւ տուած է իր տարետուրքերը ամենայն հաւատարմութեամբ : Լուսինի անդամներէն Ժիրայր Ահարոնեան 3 տարիներ պաշտօնավարած է կազմակերպութեան Կեդրոնական Խորհուրդի կազմին վըրայ : Պատգամաւոր եղած են, Ժիրայր Ահարոնեան, Վարդուհի Մարգարեան, Այրին Կիրակոսեան, Յովհաննէս Մօրուքեան, Թադուհի Պոյաճեան :



(\*) ՆՅԳԳՉԻՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՆՆՈՒՆՈՒՄ ԵՎ ԳՆՈՒՆՈՒՄ ԵՎ ԳՆՈՒՆՈՒՄ ԵՎ ԳՆՈՒՆՈՒՄ



## ԵԿԵՂԵՑԱՍԷՐ ՏԻԿՆԱՆՑ ՄԻՈՒԹԻՒՆ

Ինչպէս որ զբքոյկիս սկզբնաւորութեան յիշած էինք, Լոյկելի Սըրբոց Վարդանանց Հայաստանեայց Եկեղեցւոյ Տիկնանց Միութիւնը հիմնուած եւ կազմուած է Եկեղեցւոյ շինութենէն շատ առաջ: Այս միութեան սկզբնաւորութեան սարգսպարներն ու պատճառները այնքան վեհ եւ գոյգոյզ են որ կ'արժէ հոս պատմել մի քանի տողերով:

Լոյկելի Հայ Տիկինները 1906-ին քով քովի դաւով կը կազմեն ՀԱՅ ՏԻԿԻՆՆԵՐՈՒ ՈՐԲԱՆՆԱՄ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ մէջ մասնաճիւղը: Թէ Լուսաւորչական եւ թէ Բողոքական Տիկիններ անդամ էին այս միութեան: Ասոնք ամէն տարի նիւթապէս կը հաւատարէին Կիլիկիոյ Կաթողիկոսարանի մէջ պատասպարուած 8 հայ որբեր:

Քանի մը տարիներ վերջ այս միութեան մէջլի Լուսաւորչական Տիկինները դուրսը մնացած կարգ մը այլ հայ տիկիններու հետ համախորհուրդ կը փափաքին դուրսի որբերուն օւնելի զատ Լոյկելի մէջ եւս զորմ մը կատարել: Այդ օրերուն Հայ Եկեղեցւոյ չգոյութեան պատճառաւ, հայոց միլիտութիւնները, պսակները եւ թաղումները կը կատարուէին միշտ օտար եկեղեցիներու մէջ, կամ օտար եկեղեցականի մը ձեռքով եւ կամ ալ հեռունէրէն բերուած հայ եկեղեցականի մը ձեռքով: Լոյկելի Լուսաւորչական Տիկինները ի տես այս անկանոնութեանց եւ թափառումներու, կը խորհին որ պէտք է վերջ մը զրուի այդ բոլորին եւ հայ սրբու Լոյկելի

(\*) Զայնէն Աջ.— Ա. Շարֆ նաւած.— Տիկնայֆ՝ Ազնիւ Ասլանեան, Մարիամ Պոյանեան, Արշալոյս Կուսուզեան, Տէր Կարէն Քահանայ, Հրոնիփսիմէ Մարգարեան, Թուրվանտա Ամպոյեան, Ազանի Տէր Պօղոսեան: Բ. Շարֆ.— Եվա Պօղոսեան, Սիրանուշ Պերպատեան, Մարիամ Պերպատեան, Թագուհի Տօնապետեան, Եղսաբէք Շապուհեան, Շուշան Թորգոմեան, Սառա Գօլթուբեան, Սաքեմիկ Պօղոսեան, Ազանի Մանոչեան, Պէսի Կիրեղեան, Ճուլիա Մուշեղեան, Վարդուհի Մանոչեան: Գ. Շարֆ.— Մարգրիտ Գրիգորեան, Տիրիֆ Գրիգորեան, Թամամ Գրիգորեան, Բրաբիոն Ահարոնեան, Իւզաբեր Պարսամեան, Մարթա Խոշմարեան, Ալթուն Ճգնաւորեան, Փիլիմիա Գագանեան, Ագառուհի Գագանեան:

մէջ ունենայ իրեն սեւրհական եկեղեցին եւ եկեղեցականը :

Ահաւաստիկ այս նպատակաւ է որ 1910 Հոկտեմբեր 10-ին 28 Լուսաւորչական տիկիներ ժողով մը կը դումարեն Տիկին Սողոմէ Մարգարեանի տունը 118 Լորէնս Սթ. եւ հիմը կը դնեն Լովելի Եկեղեցասէր Տիկնանց Միութեան : Եւ կը որոշեն անմիջապէս դործի լծուիլ եւ Հայկական Եկեղեցի մը կառուցանել :

Այս առաջին ժողովին մասնակցող Տիկիներուն անունները կը դընենք ստորեւ, որպէս Եկեղեցասէր Տիկնանց Միութեան հիմնադիրներ . Մարթա Թէրզեան, Մարիամ Գրիգորեան, Խանըմ Իջմէլեան, Փերուզ Պապիկեան, Վիկտոր Կորկոտեան, Սառայ Յակոբեան, Սառա Պարսորեան, Մարիամ Աւաքելեան, Վարդանուշ Գրիգորեան, Խորանուշ Պէտտոյեան, Մարիամ Գաղանճեան, Փիլիմիճա Գաղանճեան, Եղսայ Գաղանճեան, Եւա Դարբինեան, Ալիսաթուն Ասատուրեան, Զարուհի Տէր Մանուէլեան, Եռզարեթ Տէր Կարապետեան, Նուարդ Կոչկարեան, Զըւարթ Ջուլհակեան, Սողիկ Գրիգորեան, Մարիամ Գալաշեան, Եղիսաբէթ Աբրահամեան, Եղսաբէթ Մարգարեան, Աննա Մարգարեան, Վարդիկ Մուշեղեան, Թուրվանտա Բարեշանեան, Վարդուհի Օնանեան, Սողոմէ Մարգարեան :

Եկեղեցասէր Տիկնանց Միութեան Առաջին Վարչական կազմը կը բաղկանայ հետեւեալ տիկիներէ . Մարթայ Թէրզեան, Փիլիմիճա Գաղանճեան, Փերուզ Պապիկեան, Վիքթորիա Կորկոտեան, Սառա Յակոբեան :

Եկեղեցասէր Տիկնանց Միութիւնը իր նպատակին հասնելու համար իր առաջին ձեռնարկը կը սարքէ 1911-ի Փետրուարին, որուն ներկայ կ'ըլլայ նաեւ Մուշեղ Արք. Սերոբեան :

Ինչպէս յիշած ենք Տիկնանց Միութեան այս ձեռնարկներն ու ցուցարբերած խանդավառութիւնն էր որ արթնցուց նաեւ քաղաքիս այրերուն եռանդը 1913-ին : Եւ Տիկիներն ու այրերը միասնաբար ձեռնարկներ տալով եւ հանդանակութիւններ ընելով շինեցին Լովելի Սրբոց Վարդանանց Հայաստանեայց Եկեղեցին 1916 Ապրիլ 16-ին :

Եկեղեցասէր Տիկնանց Միութիւնը Եկեղեցի մը կառուցանելու իր անմիջական նպատակին հասնելէ վերջ կանգ չառաւ : Այլ ընդհակառակը տարուէ տարի աւելի անդամներ արձանագրելով իր մէջ, շարունակեց տարեկան ձեռնարկներ տալ, եւ օժանդակել Ս. Եկեղեցւոյս պայծառացման եւ բարելաման :

40 տարիներու ընթացքին Տիկնանց Միութեան կատարած բազում դործերուն եւ օժանդակութեանց մէջ կարելի է յիշել հետեւեալները .— Եկեղեցւոյ նստարաններն եւ աթոռները գնեցին : Եկեղեցւոյ խոհանոցն եւ բեմը շինեցին եւ յարդարեցին եւ վերաշինեցին : Ելեկտրական լոյսերը հաստատեցին : Երկար տարիներ Եկեղեցւոյ պարտքին տոկոսը եւ ամսականը վճարեցին : Եկեղեցւոյ տաքութեան, ածուխէն իւղի փոփոխութիւնը կատարեցին : Դպրաց Դասի շապիկները կարել տուին երկու անգամ : Եւ մանաւանդ մինչեւ վերջերս Հայկական Դպրոցի հսկողութիւնը եւ նիւթական մատակարարութիւնը կատարեցին : Վերջին տասնամեակին, Եկեղեցւոյ խորանը եւ Դպրաց Դասի կեցած տեղը վորդով ծածկեցին եւ յատակը «դայլով» ծածկեցին : Քանի մը տարիներ ալ Եկեղեցւոյ տաքութիւնը մատակարարեցին :

Եկեղեցասէր Տիկնանց Միութիւնը կարելի է անուանել, եկեղեցւոյս ամէնէն հզօր եւ կարեւոր սիւներէն մին : Տիկնանց Միութիւնը Եկեղեցւոյս միակ կազմակերպութիւնն է որ իր ունեցած ամբողջ եկամուտը կը տրամադրէ եկեղեցւոյս անմիջական կամ մասնաւոր սէտքերուն համար :

Տիկնանց Միութիւնը հակառակ անոր որ ենթակայ է Ծխական Խորհուրդի, սակայն եւ այնպէս կը կատարուի ինք իր ընդհանուր անդամական ժողովով : Անդամուհիները կը վճարեն տարին երեք տոլար տուրք : Անոնք կը դումարեն ամիսը մէկ անգամ անդամական ժողով : Ընթացիկ դործերը կը կատարէ Վարչական Մարմինը որ կ'ընտրուի տարեկան ընդհանուր անդամական ժողովի մէջ : Տիկնանց միութիւնը անցեալի մէջ տուած է տարին մէկէ աւելի ձեռնարկներ, բայց այժմ կը սարքէ տարին մէկ ձեռնարկ միայն, որ է Տարեկան Մեծ Պահոց Քիւֆթէ Բարթի : Ինչպէս որ ուրիշ տեղ մը բոսած ենք այս ձեռնարկը Եկեղեցւոյս մեծադոյն եւ աւանդական դարձած ձեռնարկներէն մէկն է, աւելի քան 200 հոգիներ ներկայ կ'ըլլան եւ զուտ շահը 350 տոլարի կը հասնի :

Տիկնանց Միութեան 1955-ի Տրատու անդամներուն ցանկը կուտանք ստորեւ : Տիկնանց Միութիւնը այսօր ունի 55 անդամուհիներ : Ասոնց 5 հատը թէեւ մահացած են բայց իրենց անդամութիւնը կը շարունակուի որովհետեւ իրենց ողջ պարագաներուն—կողմէ անդամակցութեան անհրաժեշտ տուրքը կը տրուի : Իսկ մէկ հատը ցկեանս անգամ է : ՅԵՏ ՄԱՀՈՒ ԱՆԴԱՍ

Եղսաբէթ Գաղանճեան, Մարիամ Գաղանճեան, Ալիսաթուն Ասատուրեան, Սուլթան Ճընաւորեան, Թուրվանտա Բարեշանեան, Եվա Դարբինեան :

ՏՐԱՏՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

Փիլիմիճա Գաղանճեան,  
Պէսի Կիւրեղեան  
Տէլբանուհի Արապեան  
Սաթենիկ Պոլոսեան  
Արչալոյս Կուսուղեան  
Հոխրսիմէ Մարգարանեան  
Ովսաննա Գլըճեան  
Եղսարէթ Շապուհեան  
Թամամ Գրիգորեան  
ՏիրիՓ Գրիգորեան  
Հոխրսիմէ Բարիկեան  
Աղանի Պարսորեան  
Սառա Գոլթուքեան  
Թուրվանտա Մլքիկեան  
Հայկուհի Գաղանճեան  
Վարդանուշ Նորդրացեան  
Ծաղիկ Ասլանեան  
Թուրվանտա Ամպոյեան  
Աղանի Մանոյեան  
Շուշան Թորդոմեան  
Աղնիւ Ասլանեան  
Մարթայ Սոլմաթլեան  
Սրբուհի Սարգիսեան  
Մարգրիտ Գրիգորեան

Թաղուհի Տօնապետեան  
Ասողիկ Մլքիկեան  
Սիրանուշ Պէրպատեան  
Եղսարէթ Պարսորեան  
Աղանի Մարգարեան  
Այթուն ձյնաւորեան  
Վարդուհի Մանոյեան  
Ճէնի Պապիկեան  
Ճուլիա Մուշեղեան  
Մարիճա Մուսայեան  
Վերժին Սարգիսեան  
Մարգրիտ Արապեան  
Բրարիոն Ահարոնեան  
Լուսի ձյնաւորեան  
Մարիամ Առաքելեան  
Աղատուհի Քոյսճանեան  
Եւա Պոլոսեան  
Սիրուն Բարիկեան  
Իւլյարեր Պարսամեան  
Մարիամ Պէրպատեան  
Աղանի Տէր Պողոսեան  
Մէյրի Պոյաճեան  
Մանուշակ Պալեան

Դժբախտարար մեր ձեռքին տակ չունինք Տիկնանց Մլուքեան 1910  
1932-ի արձանագրութիւնները : 1933-1956-ի արձանագրութիւններէն քա-  
ղելով ստորեւ կուսանք Վարչութեան մէջ պաշտօն ստանձնած Տիկնանե-  
րու անունները :

Փիլիմիճա Գաղանճեան, 1933, 34, 35, 37, 39, 40, 43, 44 :  
Գեղուհի Մլքիկեան, 1933, 45 :  
Պատասխան Սրմայեան, 1933 :  
Տիլբանուհի Արապեան, 1933, 34, 37, 39 :  
Մարիամ Գաղանճեան, 1933, 35, 38, 39, 40, 43, 44, 45 :

Արչալոյս Կուսուղեան, 1934, 36, 39, 41, 44, 46, 51, 52, 53, 56 :

Լուսանուշ Սիմօնեան, 1934 :  
Եղսարէթ Շապուհեան, 1934, 41, 48, 49, 51 :  
Թուրվանտա Ամպոյեան, 1935, 47, 54, 55, 56 :  
Հոխրսիմէ Բարիկեան, 1935 :  
Ագապի Նորդրացեան, 1935, 40 :  
Հոխրսիմէ Մարգարանեան, 1936, 41, 46, 50, 54, 55, 56 :  
Աննա Աւաղեան, 1936, 37 :  
Շուշանիկ Թորդոմեան, 1936, 49 :  
ՏիրիՓ Գրիգորեան, 1936, 45 :  
Պէսի Կիւրեղեան, 1937, 38, 41, 45, 46, 48, 49, 51, 52, 53 :  
Վիկտոր Կիւրիւնեան, 1937, 40 :  
Թամամ Գրիգորեան, 1938, 39, 51, 52, 53 :  
Ծաղիկ Ասլանեան, 1938 :  
Մարթա Սոլմաթլեան, 1938 :  
Ասողիկ Մլքիկեան, 1940, 43 :  
Սիրանուշ Պէրպատեան, 1941, 54, 55 :  
Աղանի Մանոյեան, 1943, 44, 48 :  
Աղնիւ Ասլանեան, 1943, 44, 49, 50, 52, 53, 56 :  
Սրբուհի Սարգիսեան, 1945 :  
Թաղուհի Տօնապետեան, 1946, 51 :  
Մարիճա Մուսայեան, 1946 :  
Փեփրան Սարգիսեան, 1947, 49 :  
Պերճուհի Քէջեան, 1947 :  
Մարգրիտ Գրիգորեան, 1947, 50 :  
Հայկուհի Գաղանճեան, 1947 :  
Վերժին Սարգիսեան, 1948 :  
Աղանի Մարգարեան, 1948 :  
Վարդանուշ Նորդրացեան, 1950, 52, 53 :  
Լուսի ձյնաւորեան, 1950 :  
Ովսաննա Գլըճեան, 1954, 55 :  
Աղանի Տէր Պողոսեան, 1956 :  
Մէյրի Պոյաճեան, 1956 :  
1956-ի Վարչութեան կազմն է . Արչալոյս Կուսուղեան, Աղանի  
Տէր Պողոսեան, Աղնիւ Ասլանեան, Մէյրի Պոյաճեան, Թուրվանտա Ամ-  
պոյեան, Հոխրսիմէ Մարգարանեան :

## ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑ

Եկեղեցւոյս կողքին եւ եկեղեցւոյս հովանիին տակ Հայկական գրպոց մը բացուած է Եկեղեցւոյ շինութեանն անմիջապէս վերջ եւ այս գրպոցը յարատեւած է մինչեւ այսօրս գրեթէ անխափան :

Ինչպէս որ բաժնէն Եկեղեցւոյ Հայկական Դպրոցին Խնամատարութիւնը երկար տարիներ կատարած է Եկեղեցւոյ Տնօրէնաց Միութիւնը : Երբեմն երբեմն քաղաքիս ուսումնասիրաց ընկերութիւնները օգնած են, իսկ այժմ ալ Դպրոցներու Օժանդակ Միութիւնն է որ կը հոգատարէ Հայկական Դպրոցը : Աշակերտները գրեթէ միշտ տարեթուակ մը փճարած են որքան ալ չնչին բան մը ըլլայ ատիկա : Մնացեալ գրամները գոյացած են հոգատար մարմինին կամ միութեան կողմէ տրուած տարեկան ձեռնարկներով : Ծխական Խորհուրդները ոչ մէկ ատեն Դպրոցին նիւթականը մատակարարելու ստիպման տակ զանուած են : Սակայն եւ այնպէս միշտ ալ Դպրոցի ուսուցիչը իրենք են որ վարձած կամ վաւերացուցած են :

Դժբախտաբար Դպրոցի ուսուցչութիւնը կատարողներուն լրիւ ցանկը կամ ալ ճշգրիտ թուականները չունինք մեր ձեռքին տակ : Ամէնէն չին ուսուցչուհին եղած է Լափեյէն Տիկ. Եղսարէթ Առաքելեան : Որ չորս տարի մը գտնէ պաշտօնավարած է 1918-1922 : Մինչեւ 1925 մէջ ընդ մէջ ուսուցչութիւնը կատարած են Տ. Ղեւոնդ Վրդ. Մարգարէտեան եւ այլք : 1925-ին ուսուցչուհին է Օր. Վարդուհի Տօնիկեան, գարձեալ Լափեյէն : 1926-էն 1930 Տ. Եղիշէ Քահն. Գառնարեանը հաշտութիւնը կատարելով մէկտեղ ուսուցչութիւն ալ կ'ընէ : 1930-1932 ուսուցիչն է Տիկ. Արմենուհի Թովմանեան, որ իր հրաժարականը կը ներկայացնէ երբ 1933-ին Տ. Յուսիկ Քահն. կուգայ եւ Ծխական Խորհուրդի խնդրանքով ուսուցչութիւնը եւս կ'ընէ : 1935-ին արդէն Տիկ. Արշալոյս Նուրիկեանի անունը կը յիշուի, որ Լորէնսէն կուգայ եւ երկար տարիներ կը գառնարակէ Լափեյի մէջ հասակ նետող Հայ սերունդը : 1939 գարձեալ Լորէնսէն Տիկին Սիրվարդ Միհրանեան կուգայ եւ ուսուցչութիւնը կ'ընէ : Կ'ըսուի թէ Լորէնսէն եկող այս երկու արկիւններն ալ վկայեալ ուսուցչուհիներ եղած են : 1948-էն 1950 Դպրոցիս ուսուցչութիւնը կատարեց Էմմանուէլ Կէօքճեան : Վերջնապէս Նիւ. Եորթ փոխադրուելուն պատճառաւ ուսուցչութիւնը ստանձնած է Տ. Կարէն Քահն. Կասնեան, որ մինչեւ այսօր ալ սակաւին ուսուցչութիւնը կ'ընէ :

1925-ին Հայկական Դպրոցը ունեցած է 75 աշակերտներ : 1935-ին 55 աշակերտներ եւ 1942-ին 27 աշակերտներ : 1948-ին 30 աշակերտներ ունէինք իսկ 1955-ին Հայ Դպրոց եկողներու թիւն էր 16 :

49 տարիներու ընթացքին Հայ Դպրոց յաճախողներու անուանացանկ մը տալը թէ անկարելի է եւ թէ ալ այնքան կարեւոր բան մը չէ : Քանի որ Ամերիկա ծնող ատաղին սերունդի անդամները անպայման գալոց կը գրկուէին իրենց ծնողներուն կողմէ : Հիմա է որ գրեթէ անկարելի է մանուկները գալոց գրկել, ինչպէս կարելի է գիտեալ տարուէ տարի նուազող թիւերէն :

Ստորեւ կուտանք միայն 1955-ին Դպրոց արձանագրուած աղջիկներու եւ աղայոց անունները :

Երեցներ	Միջին
Տիգրան Աղաչեան	Մայքըլ Քէյսի
Անտրա Ամպոյեան	Ճօէն Միլլըր
Գէրըլ Նալպանտեան	Քէթրին Կայլը
Արմէն Ճգնաւորեան	Լինտա Աստորեան
Միքայէլ Տօնապետեան	
Կրտսեր	Զափառաւներ
Էտրիք Նալպանտեան	Ճան Էյքթըրն
Կէրի Պոպսեան	Նիմի Տօնէթ
Մէլրի Տօնապետեան	Ատաքս Աստորեան
	Անահիտ Գլորեան

Հայկական Դպրոցը բաց է չարաթական 4 ժամ միայն : Կ'սկսի եւ կ'աւարտի Ամերիկեան Դպրոցներու հետ : Տարեկան պիւտճէն է 300 տարար : Իւրաքանչիւր աշակերտ տարեկան 10 տարար թուակ կը փճարէ : գառնուողութեանց համար կը գործածուին Արարատ, Ա. Տարի, Հայ Գիր, եւ Կիւրեանի Հայկական փերականութիւնը :

Հայկական գալոցը ամէն տարեկերջի կուտայ Ամալերջի Հանդէս մը, եւ աշակերտներն ու աշակերտուհիները գանապան ձեռնարկներու ամթիւ արտասանութիւններ կը կատարեն :

Հայկական Դպրոցը այսօր իր փոսքէն շատ ինկած է : Սակայն եւ այնպէս 40 տարիներու իր գոյութեան ընթացքին յուսուորութեան մեծ գործ կատարած է : Ամերիկա ծնած սերունդը իր Հայերէն խօսիլն, գրելը եւ կարգալը կը պարտի այս շատ փոքրիկ Հայկական գալոցի գոյութեան : Հետս քաղաք եւ կամ զինուորութեան մէջ գաւակ ունեցող ծրնողներ ուրախութեամբ եւ հպարտութեամբ կ'ընան վկայել թէ ինչպէս

ՅԱԶԿԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԸ ՄԻՆ, ԵԿԵՂՑ. ՍՐԱՀԻՆ ՄԻՋ  
 Զալիւն. — Արմէն ձգեաւորեան, Լիմոս Աստղեան, Տէր Կարէն Բախանայ՝ ուսուցիչ, ԳԵՐՈՂ  
 Նալպանտեան, Աբնար Ամբոյեան, Կարապետ Պօղոսեան :



սոխն շարաթ հայերէնով դրուած կցկտուր, բայց հասկնալի նամակներ  
 ստացան եւ իրենց վիշտն ու կարօտը սփոփեցին :

### ԴՊՐՈՑՆԵՐՈՒ ՕԺԱՆԴԱԿ ՄԻՈՒԹԻՒՆ

1951 տարւոյ Դեկտեմբեր 4-ին մօտաւորապէս 15 երիտասարդ մայրեր եւ 5 Կիրակնօրեայ Դպրոցի ուսուցչուհիներ, Միասկան Խորհուրդին հրաւերով եկեղեցւոյ սրահին մէջ ժողով մը գումարեցին եւ հիմը դրին Մնողաց եւ Ուսուցիչներու Միութեան մը, Ամերիկեան անուամբ՝ Բի, Թի, Էյ : Այս ընկերութեան միակ նպատակն էր, եկեղեցւոյ Կիրակնօրեայ դպրոցին նիւթական հոգատարութիւնը ստանձնել, եւ հայ մանուկներուն սօնական օրերու առիթով ընկերական հաւաքոյթներ եւ ուրախութիւններ մատակարարել : Այս Միութիւնը հալիւ հազ մէկ տարեկան եղած իր վրան ստանձնեց նաեւ եկեղեցւոյ Հայկական Դպրոցին նիւթական Մատակարարութիւնը : Ահա թէ ինչու, այսօր հայերէնով զայն կ'անուանենք ԴՊՐՈՑՆԵՐՈՒ ՕԺԱՆԴԱԿ ՄԻՈՒԹԻՒՆ մինչդեռ Ամերիկեան անունը տակաւին կը շարունակէ մնալ «Բի-Թի-Էյ» :

Ակիւրբները այս միութեան կրնային անգամակցիլ միայն Կիրակնօրեայ Դպրոցի մէջ գաւակ ունեցող մայրեր : Սակայն այժմ այդ պայմանը փոխուած է եւ սեւէ մէկ ամուսնացեալ կին կրնայ անգամակցիլ :

Դպրոցներու Օժանդակ Միութեան զործօն անգամուհիներուն թիւն է 32 : Ստորեւ կուտանք անոնց անուանացանկը. —

- |                    |                          |
|--------------------|--------------------------|
| Օլիա Աղաչեան       | Մարճի դպրանճեան          |
| Թուրքաճատ Ամպոյեան | Ալատուհի Քայաճանեան      |
| Մարիամ Ասաքեյեան   | Վարդուհի Գլլմեան         |
| Ալիս Պարսոբեան     | Մարգրիտ Գրիգորեան        |
| Եւա Պոլսոեան       | Լուսին Լուսիկեան         |
| Վարդուհի Պայաճեան  | Վարդուհի Մանուկեան (Օր.) |
| Պէթի Տարտիկեան     | Վարդուհի Մարգարոս        |
| Անահիտ Տէրոյեան    | Ճուլիա Մուշեղեան         |
| Թադուհի Տօնապետեան | Լուիզ Նալպանտեան         |
| Չապէլ Կոստեան      | Ալիս Նարարեան            |
| Մարգրիտ Կայրր      | Սիրուն Բարիկեան          |
| Ֆլորա ձղնաուրեան   | Տօրա Բարսեան             |
| Վերոնիքա Ճօնդ      | Լուսին Բիւրյեան          |
| Լուսին ձղնաուրեան  | Ճէսի Մօրուքեան           |
| Վրճինիա ձղնաուրեան | Պէթի Էյթքըն              |
| Հէլլըն Գալանճեան   |                          |

Դպրոցներու Օժանդակ Միութիւնը բացի Յուլիա եւ Օլգաստոս ամբիւ-



ներէն ամէն ամսու առաջին երեքշաբթիի երեկոյեան կը դուժարէ իր ան-  
զամական ժողովը, անդամուհիներէն միոյն տան մէջ: Միայն տարեկան  
անդամական ժողովն է որ կը դուժարուի ճաշարանի մը մէջ, ուր կը  
կատարուի նաեւ վարչութեան ընտրութիւն:

Միութիւնս սնի իր տարեկան ձեւնարկը սրուն անունն է ՐՍՏ ԲԱՂ-  
ԴԻ ՃԱՇԿԵՐՈՅԹ, ասոնցմէլ գրտ սուած է նաեւ Ամերիկեան Շուրջպար,  
Քարտ Բարթի, Շարժանկարի ցուցուցութիւն, և այլն:

Գպրոցներու նիւթական օժանդակութիւն ընելէ գրտ 5 տարինե-  
րու ընթացքին գնած է գրտախտակ մը, մանուկներու համար 4 սեղան  
և 16 աթոռ, Եկեղեցւոյ յուսարանները վերանորոգած է: Բեմին համար  
վարպետներ գնած է: Երեք տարի իբրտու վրայ առուցելները գրկած  
է Կիրակնօրեայ Գպրոցներու Համարումարին: Մանուկներու համար  
սարքած է Հալոյին Բարթի, Վարդանանց Տօնի հասարակ, և հալոր-  
գութեան նախաճաշ:

Գպրոցներու Օժանդակ Միութիւնը իր անմիջական նպատակին հաս-  
նելէ գրտ միշտ օգնած է նաեւ Տիկնանց Միութեան և Միական Սոր-  
հուրդի ձեւնարկներուն: Անդամներէն երեք արկիներ Կիրակնօրեայ  
Գպրոցի ժամանակ ներկայ կ'ըլլան և պէտք եղած ստեն իրենց օգնու-  
թիւնը կ'ընծայեն:

Այս տարի թէլ տծած ըլլալու համար իրենց հիմնադրութեան հնգ-  
ամեակը և թէլ այ յիշատակելու համար Եկեղեցւոյ 40-ամեակը անոնք  
պատրաստել տուն յախճատակիէ սինկներ սրոնց վրան Եկեղեցւոյ  
պատկերը սպուած է: Միութեանս Դիւանը եղած է հետեւեալը:

- 1951-1952
- Պէթի Տաղաթիկեան
- Եփա Պարտեան
- Ալիս Պարտեան
- 1952-1953
- Ռոյ Մարգարոս
- Ալիս Նարարեան
- Ալիս Պարտեան
- 1953-1954
- Պէթի Տաղաթիկեան
- Օրիս Աղաչեան
- Ալիս Պարտեան

- 1954-1955
- Ռոյ Մարգարոս
- Ռոյ Գլլաճեան
- Անահիտ Տէրոյեան
- 1955-1956
- Հէլլըն Գաբանճեան
- Վերանիքա ձօնոյ
- Մարիամ Ասաքեւեան
- 1956-1957
- Զատէլ Կտանեան
- Ֆլորա ձգնաւորեան
- Մարգրիտ Գրիգորեան

## ՊԱՐՏԱՄՈՒՐԱԿ

Եկեղեցին իր պարագրեւէն այլ անուամբ «Մարկէճէն» կազատի 1942-  
ին: Արձանագրութիւնները ծայրի ի ծայր կարգացոյ մը կընայ երեւո-  
կայի թէ 1916ին Եկեղեցին շինելու համար դրամատունէն փոխ ասնուած  
այս պարտքը որքան ծանր կը կշռէր Միական Սորհուրդի վրայ: 4,500  
սորար եղող այս գումարը անշուշտ տեղումներով միտսին բարձրացած ու  
բարձրացած էր, 1924-ին կատարուած 1000 տոլարի ուրիշ փոխառութիւն  
մը անկասկած գոյն աւելի ու աւելի բարձրացուցած էր: 1934-ին Միական  
Սորհուրդը կը որոշէ փոխան ծաղկեղջուակներէ հաւաքուած գրամները  
այս պարտքին յատկացնել: 1936-ին Տիկնանց Միութիւնը իր վրայ կ'առ-  
նէ պարտուց սակերը ամսէ ամիս վճարելու պարտականութիւնը: 1940ին  
սակայն 2000 մնացած այս պարտամուրհակէն միանգամ ընդմիշտ ազա-  
տելու համար պարտուց բարձման մասնաւոր յանձնախումբ մը կը կազ-  
մուի: Որոնք երկու տարիներ չտրաչար աշխատելէ տունէ տուն ու քու-  
ղաքէ քաղաք պարտելէ վերջ կը յաջողին 1942-ի Մայիս 24-ին կիւղի գրե-  
թէ 30 տարեկան եղող այլ թուղթի կտորը, Գերշ. Տէր Գարեգին Արք-  
պսկս. Յովսէփեանի նախապահութեամբ տեղի ունեցած ճաշկերոյթի մը  
մէջ:

Ստորեւ կուտանք այս յանձնախումբին մաս կազմող 5 ազգայիններու  
անունները, Տիարք Յակոբ Գլճեան Ատենապետ, Մերկերիոս Ահարոնեան  
Քարտուղար, Կարապետ Մլքիկեան Գանձապահ, Էսթհանէս Կիրեղեան  
և Մարգրիտ Ասլանեան:

## ՇԻՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԱՅԵԼՉՈՒԹԻՒՆ

40 տարիներու ընթացքին Եկեղեցւոյ Շէնքին վրայ ոչ մէկ հիմնա-  
կան փոփոխութիւն կատարուած է: Մեր Եկեղեցին այլոց նման հսկայ և  
կամ յարակից սենեակներով հարուստ շինութիւն մը չէ: Ընդհակառակը  
ամէն այցելու կը հիանայ թէ ան որքան փոքրիկ, կսկիկ և համեատ Եկե-  
ղեցի մըն է: Անոր երկայնքն է 92 սոք և լայնքն է 31 սոք: 200 հոգի հան-  
դիստ մը կընայ նստիլ: Ունի մէկ խորան, աջին ու ձախին երկու փոքրիկ  
սենեակներ կան որոնք կը ծառային զգեստներու և զանազան առարկանե-  
րու պահպանման համար: Եկեղեցւոյ ներքնայարկը կայ սրահ մը ուր  
նոյնպէս 200 հոգիներ կընան նստիլ և հանդիստ մը ճաշել: Սրահին յեռ-  
սակողմը կայ փոքրիկ բեմ մը, ձախին խոհանոցով և աջին սենեակով մը  
ուր տաքութեան սարքուածքը կայ: Լուսացարանները հաստատուած են

սրահին առաջամասին վրայ: Եկեղեցւոյ շէնքը շրջապատուած է ցանկապատով եւ թէ ետեւը եւ թէ շուրջը յարդարուած է կանաչազարդ խոտով: Եկեղեցւոյ այս շէնքը 1916-ի ատենները Հայերու բնակութեան կեդրոնավայրն էր, բայց այսօր այդ շրջաններուն մէջ հազիւ հազ քանի մը ընտանիք մնացած է:

Եկեղեցւոյ շէնքը շունի աւանդատուն կամ գրասենեակ մը: Չունի Ծխատուն: Կիրակնօրեայ դպրոցի աշակերտներուն համար մասնաւոր դասարաններ չկան: Չկան նաեւ շատ մը արդիական դիւրութիւններ: Թերեւս հարցուի թէ 40 տարիներու ընթացքին արգօք ինչո՞ւ ոեւէ չինութիւն կամ յաւերում չէ կատարուած Եկեղեցւոյ շէնքին վրայ: Չէ կատարուած որովհետեւ ժողովուրդը այդ յաւերումը ընելու կարողութիւնը չէ ունեցած: Այս բանս հասկնալի է անոր համար որ Եկեղեցին գրեթէ միշտ պարտքերու տակ եղած է եւ հազիւ հազ կարողացած է իր ելեւմուտքը հաւասարակշիւ եւ իր անօրեայ պէտքերուն հասնիլ:

Միւս կողմէ սակայն գրեթէ ամէն տարի սա կամ նա նորուութեան կամ շինութեան հարցը ինչքոյ առարկայ եղած է ծխական ժողովներու մէջ: Օրինակի համար 1924-ին 1000 տոլարի փոխառութիւն մը կ'ընեն պատերազմ շինութեան համար: 1930-ին կը խորհին Եկեղեցւոյ կից շէնքը պնէլ բայց անկարող կ'ըլլան: 1931-էն 1932 Եկեղեցւոյ խորանին վրայի երկու պատու հանները կը պոկեն եւ փոքրիկ նիշերու կը վերածեն: Եւ մտմի փոխարէն ելեկորականութիւն կը պնեն: 1935-ին Եկեղեցւոյ շրջապակին մէջ պարակց կը մշակեն եւ ծառեր կը անկեն: 1936-ին, 1937-ին եւ 1938-ին Եկեղեցւոյ շրջապակը կը շինուի, ձեզանի նորայութիւն կ'ըլլայ եւ ամբողջ շէնքը ներսով դուրսով կը ներկուի: 1945-ին Եկեղեցւոյ տաքութիւնը կ'սկսին խզով մտտակարարել: Ածուխէն խզի փոփոխութիւնը կը կատարուի Տիկնանց Միութեան ծախսերով: 1948-ին Եկեղեցւոյ գլխաւոր պարտաւ հողը կը պնուի: Եկեղեցւոյ յատակը «թայլ»-ով կը ծածկուի: 1949-ին Խորանը եւ գտերը պոքոյ կը ծածկուին, խոհանոցը կը վերանորոգուի, Գոյրաց շաքիթեքան համար գարաններ կը շինուին եւ ամսամեայ գրտակնեակ մը կը կատարուի Սրահի աջ յատակամասը: 1955-ին Եկեղեցւոյ տանիքը ամբողջութեամբ կը վերանորոգուի:

Ինչպէս որ յիշեցինք Եկեղեցւոյս ոչ ներսը եւ ոչ ալ դուրսը յարգարեալ եւ պատշաճ եղանակով է: Գոնաւոր տղակիներ եւ կամ ալ աչքապան սուրբերու պատկերներ չունինք: Սակայն եւ այնպէս Եկեղեցւոյս անհրաժեշտ պէտքերը Եկեղեցւոյ Օձման օրէն իսկ միշտ յրապարակ են հաստատեալ նախապատաներու կողմէ, անինք բուսականաչափ Պատարալի պիտաներ, Խորանի լոյսերը դարձեալ մամի վերածուած են, անինք ամէն տեսակի

խաչեր, ճաճանչ, կանթեղներ եւ այլն եւ այլն: Նոյնիսկ ամարուան տաքերէն արեւը պատուելու համար խոշոր ելեկարական հովանարներ ունինք:

Ինչպէս լսինք թէ եւ անհրաժեշտ եղող սպասներն ու առարկաները ունինք բայց միշտ ալ նորութեան, գեղեցկութեան եւ յարդարանքի տեղ կայ եւ կարելիութիւն կայ: Կը յուսանք որ 40-ամեակի առթիւ կամաց կամաց զոգացումներն արթնան եւ ժողովուրդը սկսի զարդարել եւ վայելչացնել այս փոքրիկ բայց սիրուն Եկեղեցին:

### ՇԻՆՈՒԹԵԱՆ ՖՈՆՏ ԵՒ ՏԱՐԵԿԱՆ ՊԱԶԱՐՆԵՐ

1948-ին Եկեղեցւոյ շէնքին վրայ հիմնական փոփոխութիւններ կատարելու խօսքեր եւ աշխատանքներ սկսան: Ընդհանուր անգամական ժողովով մը որոշուեցաւ Շինութեան նպատակաւ 10,000 տոլար հանդանակել: Անմիջապէս Շինութեան յանձնարարութեամբ մը կողմուեցաւ, որ բազում պատրաստութիւններէ հոք 1949-ի Նոյեմբերին իր առաջին տարեկան ձեռնարկը սարքեց ԵՌՕՐԵԱՅ ՊԱԶԱՐՆԵՐ՝ անունին տակ: Ժողովրդեան մէջ մեծ խանդավառութիւն յառաջ եկաւ եւ ակնկարծուածէն աւելի նիւթական շահ զոյսացաւ նպատակին համար: Տքնաջան աշխատանք եւ զոհողութիւններ պահանջող այս տարեկան պայարները տեղի ունեցան 5 տարիներ եւ աւելի քան 12,000 տոլար հաւաքուեցաւ: Այս գրամին զլխաւոր պարբերն էր տարեկան գրքսլէնիւր կամ յուշատետրերու տպագրութիւնը, ուր աւելի քան 350 զանազան փոփոխականներ, (Հարիւրէն 90-ը ամբիկացի) թէ Լավելէն եւ թէ զուրսէն, մեծ ու պոքրիկ ծանուցումներ կը դեռնէին:

Այսօր այս գումարը կը մնայ գրամատան մէջ բարդուելով Եկեղեցւոյ աւանդ գումարին վրայ: Տարեկան Պայարները զարգացնելու եւ Շինութեան Ֆանդանարութեամբ շտեմուած է: Բայց ծրարիւններ կան ի մօտոյ վերջումն կեանքի կոչել Շինութեան այդ արշար, եւ անպայման շինութիւններու ձեռնարկել:

Ստորեւ կուսանք 5 տարիներ տաքին ու ցուրտին, ձիւնին ու փութին չարաչար դործող եւ շինութեան անունով այդ պատկառելի գումարը յուշ րեքող պատուական անձերու անունները:

Տիարք Կարապետ Պէրպատեան, Խաչիկ Մարգարանեան, Կարապետ Գոլթուքեան, Գրիգոր Աւրանեան, Գրիգոր Գլըճեան, Յակոբ Կիւրեղեան, Ժիրայր Պօլոսեան, Պօղոս Գրիգորեան, Մինաս Պարսպեան, Կարապետ Կիրակոսեան, Ժիրայր Ահարոնեան, Ազատ Ճղնաւորեան, Կրէկորի Գրիգորեան, Յակոբ Գլըճեան, Զաւէն Գլըճեան, Կիրակոս Ճղնաւորեան, Անդրանիկ Տ. Կարապէտեան, Սամուէլ Աղաչեան, Տիգրայր Հոփսիով Մարգար

պանեան, Մէյրըլ Տէրսյեան, Կոլտի Ալաշեան, Հէյրն Գաղանձեան, Ալիս Պարսորեան, Էն Էլըրա, Մարկարէթ Կայըր, Թուրքմանտա Միլըր, Արչալըս Կուտուզեան, Ռոզ Մարգարոս, Պէսի Կիրեղեան: Օրիորդներ ձուլիս Կիրակոսեան, Այբին Կիրակոսեան, Փառանձեմ Կիրակոսեան, Եղիսաբէթ Կիրեղեան, Վարդուհի Մարգարանեան, Զտոզէլ Գլըճեան, Մէյրի Աւլանեան, Մէյրի Առաքելեան, Սիրվարդ Պողոսեան, Աննա Մկրտիչեան, Ռոզ ձգնաւորեան, Եղիսաբէթ Պարպատեան, Մէյրի Պալեան, Անահիտ Պարսորեան, Անդուանէթ Գասապեան (Մէնչէսթըրլն), Մէյրի Սիմօնեան, Եղիսաբէթ Գրիգորեան, Ռաքսի Գլըճեան, Մարդրիտ Գըրղեան:

Այս անձերէն ոմանք 5 տարի շարունակ ծառայած են ոմանք ալ մէկ կամ երկու տարի: Ամէն տարի ալ Եկեղեցւոյ զանազան կազմակերպութիւնները օգնած եւ սատարած են ձեռնարկներու յաջողութեան: Տէր Կարէն Քահանայ Հայրն ալ նախադասած եւ օժանդակած է ամէն տարի:

### ՀԱՅ ԿԵԴՐՈՆ ՄԻՈՒԹԻՒՆ

1954-ին Ծխական Ժողովի որոշմամբ եւ Առաջնորդ Հօր հաւանութեամբ Ծուխիս մէջ հիմնուեցաւ Հայ Կեդրոն անուն Միութիւն մը: Հսկատեմբեր 20-ին Ծուխիս ըստ Հայերը Ժողովի մը կանչուելով սոյն միութեան Վարչական մարմինը ընտրեցին, ըստ հետևեալին: Տիրաք՝

- Գրիգոր Գլըճեան Ասենապետ
- Ասատուր Ամպոյեան Փոխ Ասենապետ
- Ժիրայր Ահարոնեան Քարասուգար
- Եղատարդ Պապիկեան Գանձապահ
- Ճան Էյթըրն
- Յովհաննէս Վօրուքեան
- Յակոբ Գլըճեան
- Գրիգոր Գրիգորեան
- Մկրտիչ ձգնաւորեան

Միութեան նպատակն էր Լովեյի մէջ Հայ մանուկներու համար կուռուցանել Հայկական Կեդրոն մը: Իրենց առաջին ձեռնարկը տեղի ունեցաւ 1955 Փետրուար 6-ին սրան աւելի քան 200 հոգի ներկայ եղան եւ սրուն նախադասեց թեմիս Առաջնորդը: Ճաշկերպութի ընթացքին բացատրութիւններ տրուեցան եւ աւելի քան 60 հոգիներ Միութեան անդամ արձանադրուելով խոստացան 5 տարուայ մէջ նպատակին համար 12.000 տարար արամաւբէլ:

Միութիւնս իր երկրորդ ձեռնարկը տուաւ 1955-ի Նոյեմբերին: Այս առթիւ տղեցին նաեւ ծանուցումներով լեցուն Յուշատետր մը:

Հայ Կեդրոն Միութիւնը 1955-ի Յունուար 21-ին իր գանձին մէջ ունէր 1688 տարար:

### ԵԿԵՂԵՑԻՈՅ ԹԵՐԹԻԿԸ

Լովեյի Սրբոց Վարդանանց Հայաստանեայց Եկեղեցին ունի ամսաթերթիկ մը որուն անունն է ԱՌԱՋՆՈՐԴ: Թերթիկին առաջին թիւը լոյս տեսաւ 1950-ի Յունուարին եւ ցայժմ ամէն ամիս անխափան լոյս տեսած է:

Կը տպուի տարին 12 անգամ: Առաջին տարիներուն կը տպուէր 2 մեծադիր էջերով բայց այժմ կը տպուի 4 մեծադիր էջերով:

Առաջնորդ ամսաթերթը կը տպուի երկու լեզուներով՝ Հայերէն եւ Անգլերէն: Հայերէնի խմբագրութիւնը կը կատարէ Եկեղեցւոյ Հովիւր Տէր Կարէն Քահանայ իսկ Անգլերէն բաժինը կը խմբագրէ Տիար Յովհաննէս Էյթըրն: Անգեալի մէջ անգլերէն բաժնի խմբագրութիւնը կատարած են նաեւ օրիորդներ Ռոզալի Մարգարանեան եւ Աննա Մկրտիչեան: Մեքենադրելու եւ բաղմադրելու աշխատանքները կը կատարուին Տէր Հօր Գրասենակին մէջ:

Թերթիկս կը պարունակէ Եկեղեցական եւ Ծխական լուրեր, հովուական խրատներ եւ կրօնական յօդուածներ եւ գիտելիքներ:

Թերթիկս միշտ ալ նիւթապէս ինքնարու եղած է եւ ոչ մէկ կարգապահութեան վրայ բնա եղած է ընդհատակապէս անսնց ծանուցումները յարմարեան հասցնելու մէջ մեծապէս օգտակար եղած է բարբիս ալ: Հաւատակ անոր որ ամէն ամիս 300 օրինակ կը տպուի, սակայն եւ այնպէս միշտ ալ ընթերցողներու կողմէ տրուած նուէրներով ծախսերը զոյգուած են: Վերջին տարիներուն 10 վաճառականներ ծանուցումներ ղետեղած են թերթիկին մէջ եւ անսնց տուած վճարումներով կրցած ենք զանազան մեքենաներ գնել, ապագրական աշխատանքները աւելի գլխաւորելու համար:

Այս թերթիկին մէջ հաւաքածօն կայ Տէր Կարէն Քահանայի մօտ: 1950-էն վերջ Եկեղեցւոյ պատմութեամբ հետաքրքրուողներուն համար յատուկ տարբար մ'է տալիս:

**ՁԵՌՆԱՐԿՆԵՐ**

